Արձանագրություն N 6

«ԷԱՃԱՊՁԲ-2022/8-6-ԵՊԲՀ» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի (շարունակություն)

ք. Երևան «27» «հունիսի» 2022թ.
ժամը՝ 15:00

Մասնակցությամբ՝
Հանձնաժողովի նախագահ՝ **Կ. Պողոսյան**
Հանձնաժողովի անդամներ՝ **Ա. Սողոմոնյան, Ս. Առաքելյան**
Հանձնաժողովի քարտուղար՝ **Մ.Ղարիբյան**

1. Տեղեկատվություն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 23.06.2022 թվականին ներկայացված տեղեկատվության մասին

1.1 Գնահատող հանձնաժողովի քարտուղարը սույն թվականի մայիսի 24-ին PPCM համակարգի հետադարձ կապի միջոցով դիմել է ՀՀ Ֆն գնումների քաղաքականության վարչություն՝ խնդրելով տալ տեղեկատվություն առ այն, թե «Մովսեսյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, որը 12.05.2022 թվականից ընդգրկվել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, արդյո՞ք հայտը ներկայացրել է մինչև վերոնշյալ ցուցակում ներառվելու օրը, ինչին ի պատասխան ստացվել է տեղեկատվություն, որ ԷԱՃԱՊՁԲ-2022/8-6-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգին «Մովսեսյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից մասնակցության հայտը ներկայացվել է 12.05.2022 թվականին:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ պարբերության դրույթներով և հիմք ընդունելով ՀՀ Ֆն գնումների քաղաքականության վարչության կողմից ներկայացված՝ «Մովսեսյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից հայտը ներկայացնելու օրվա դրությամբ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված լինելու վերաբերյալ տեղեկատվությունը՝ հանձնաժողովը 02.06.2022թ.-ին կայացած նիստում որոշել է «Մովսեսյան» ՍՊԸ-ի ներկայացված հայտը մերժել ամբողջությամբ:

Սույն թվականի հունիսի 23-ին, ի պատասխան «Մովսեսյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված գրության, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ ներկայացվել է գրություն առ այն, որ մասնակիցը հայտը ներկայացրել է մինչև վերոնշյալ ցուցակում ընդգրկվելու օրը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ հանձնաժողովը որոշեց «Մովսեսյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար թիվ 6, 8, 9 չափաբաժինների մասով:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

2.1 «ԷԱՃԱՊՁԲ-2022/8-6-ԵՊԲՀ» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգը թիվ 6, 8, 9 չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին որոշումը չեղարկելու վերաբերյալ

2.1 Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված շտկված տեղեկատվությունը՝ հանձնաժողովը որոշեց «ԷԱՃԱՊՁԲ-2022/8-6-ԵՊԲՀ» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգը թիվ 6, 8, 9 չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին որոշումը չեղարկել:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

3. Տեղեկատվություն «ԷԱՃԱՊՁԲ-2022/8-6-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի թիվ 6, 8, 9 չափաբաժինների մասով ընտրված մասնակցի, պայմանագիր կնքելու որոշման և անգործության ժամկետի մասին

3.1 Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և «ԷԱՃԱՊՁԲ-2022/8-6-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ բաժնի 8.10-րդ կետով՝ հանձնաժողովը որոշեց թիվ 6, 8, 9 չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել «Մովսեսյան» ՍՊԸ-ին:

3.2 Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի դրույթներով՝ հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և սահմանել անգործության ժամկետ՝ հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

3.3 Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի դրույթներով՝ անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

4. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների և քարտուղարի անունները և ստորագրությունները

Հանձնաժողովի նախագահ՝ _____ **Կ. Պողոսյան**
(ստորագրությունը)

Հանձնաժողովի անդամներ՝

_____ **Ա. Սողոմոնյան**
(ստորագրությունը)

_____ **Ս. Առաքելյան**
(ստորագրությունը)

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ **Մ. Ղարիբյան**
(ստորագրությունը)

ПРОТОКОЛ N 6

Заседания оценочной комиссии по процедуре закупки под кодом «ԷԱՃԱՊՁԲ-2022/8-6-ԵՊԲՀ»
(продолжение)

г. Ереван «27» «Мая» 2022г.
Время: _15⁰⁰_

Присутствовали:	К. Погсян
Председатель комиссии:	А. Согомонян
Члены комиссии:	С. Аракельян
Секретарь комиссии:	М. Гарибян

1. Об информации, представленной Министерством финансов РА от 23.06.2022 г.

1.1 Секретарь оценочной комиссии посредством обратной связи системы РСМ 24 мая с. г. обратился в Управление политики закупок МФ РА с просьбой предоставить информацию о том, представило ли общество с ограниченной ответственностью «Мовсесян», которое с 12.05.2022 года включено в список участников, не имеющих права участвовать в процессе закупок, заявку до дня включения в вышеуказанный список, в ответ на это была получена информация о том, что заявка на участие в процедуре закупки под кодом ԷԱՃԱՊՁԲ-2022/8-6-ԵՊԲՀ была подана обществом с ограниченной ответственностью «Мовсесян» 12.05.2022 года.

Руководствуясь положениями абзаца 6 пункта 1 статьи 6 Закона РА» О закупках " и принимая за основу представленную управлением политики закупок МФ РА информацию о включении общества с ограниченной ответственностью «Мовсесян» в список участников, не имеющих права участвовать в процессе закупок, по состоянию на день подачи заявки - комиссия на состоявшемся в Ереване заседании 02.06.2022 г. приняло решение полностью отклонить заявку ООО «Мовсесян».

В ответ на письмо, представленное обществом с ограниченной ответственностью «Мовсесян» 23 июня с. г., Министерством финансов РА в Фонд «Ереванский государственный медицинский университет им. Мхитара Гераци» было представлено письмо о том, что участник представил заявку до дня включения в вышеуказанный список.

Принимая за основу вышесказанное, комиссия решила оценить заявку, представленную обществом с ограниченной ответственностью «Мовсесян» удовлетворительной по части лотов N 6, 8, 9.

Принято решение: за - 3, против – 0.

2 Информация об отмене решения несостоявшейся процедуры закупки под кодом «ԷԱՃԱՊՁԲ-2022/8-6-ԵՊԲՀ» по части лотов номер 6, 8, 9

2.1 На основании исправленной информации, представленной Министерством финансов РА, комиссия постановила отменить решение об объявлении процедуры закупки под коддом «ԷԱՃԱՊՁԲ-2022/8-6-ԵՊԲՀ» несостоявшимся в части лотов № 6, 8, 9.

Принято решение: за - 3, против – 0.

3. Информация о выбранном участнике процедуры электронного аукциона под кодом «ԷԱՃԱՊՁԲ-2022/8-6-ԵՊԲՀ» по части лотов номер № 6, 8, 9, решении о заключении договора и периоде ожидания

3.1 Руководствуясь положениями подпункта 2 пункта 10 порядка 534-Н решения Правительства РА от 18 Мая 2017 года и на основании пункта 8.10 главы 8 части 1 приглашения на закупку под кодом

«ԷԱՃԱՊՁԲ-2022/8-6-ԵՊԲՀ» - комиссия постановила признать отобранным участником по части лотов номер 6,8,9 ООО «Мовсисян»

3.2 Руководствуясь положениями статьи 10 Закона РА» О закупках", утвердить заявление о заключении договора и установить период ожидания-период со дня, следующего за днем опубликования заявления, до 10-го календарного дня включительно.

3.3 Руководствуясь положениями статьи 36 Закона РА «О закупках», уведомить отобранного участника в течение четырех рабочих дней, следующих за истечением срока бездействия, представив предложение о заключении договора и проект договора.

Принято решение: за - 3, против – 0.

4. Имена, фамилии и подписи присутствующих на заседании членов и секретаря комиссии

Председатель комиссии: _____ К. Погосян
(подпись)

Члены комиссии: _____ А. Согомонян
(подпись)

_____ С. Аракельян
(подпись)

Секретарь комиссии: _____ М. Гарибян
(подпись)